

## ՀՀ ՏԿԱԻ նախարարի մոտ քննարկվել են Վայոց ձորի մարզային խնդիրները

22.01.2016



Հունվարի 22-ին ՀՀ ՏԿԱԻ նախարար Արմեն Երիցյանը ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի մասնակցությամբ անցկացրել է խորհրդակցություն՝ նվիրված Վայոց ձորի մարզի, մասնավորապես, Ջերմուկ քաղաքի սոցիալ-տնտեսական խնդիրներին:

Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը ներկայացրեց նաև մարզի համայնքներում առկա իրավիճակը՝ կապված սեփական եկամուտների հավաքագրման հետ:

Ջերմուկի քաղաքապետ Վարդան Հովհաննիսյանը համայնքի էլետրաէներգիայի և աշխատավարձերի փոխհատուցման համար պետբյուջեից խնդրեց լրացուցիչ 35 միլիոն դրամ:

Նախարարը հանձնարարեց ՏԿԱԻ փոխնախարարներ Վաչե Տերտերյանին և Կարեն Իսախանյանին, համապատասխան մասնագետների ներգրավմամբ, ուսումնասիրել և զեկուցել համայնքներին ֆինանսական օժանդակությունների հայտերը:

- Միանգամից հնարավոր չէ բոլոր հարցերը լուծել, բայց որ համայնքներում առկա խնդիրները պետք է լուծվեն, երկրորդ կարծիք չի կարող լինել,-նշեց Ա. Երիցյանը:

ՀՀ ՏԿԱԻ նախարարն ընդգծեց, որ նմանատիպ հանդիպումները պարբերական բնույթ կկրեն, ինչպես նաև հաճախակի կլինեն այցերը մարզեր՝ խնդիրները տեղում քննարկելու նպատակով:

Աղբյուրը՝ [www.mta.gov.am](http://www.mta.gov.am), 22.01.2016